



Ն Ա Խ Ա Ր Ա Ն

«Հայ ժողովրդական հեփաքներ» գիտական հրատարակության VII հատարում զետեղված են պատմական Հայաստանի Մեծ Հայքի Արցախ և Սյունիք նահանգների (Սևանային Ղարաբաղի և Զանգեզուրի ազգագրական շրջաններ) հեփաքները: Այս առումով հեփաքների ներկա հատորը օրգանապես շարկապված է V և VI հատորների նյութերի հետ: Կերկա հատորում գերակշռող տեղ են գրավում բանահյուսության բաժնի գիտաշխատող բանահավաք Միֆայել Առաքելյանի 1960-ական թվականներին Սևանային Ղարաբաղի տարբեր շրջանների գյուղերում գրի առած նյութերը: Հատորում զետեղված են նաև Նախկին բանահավաք, այժմ սովետահայ նշանավոր արձակագիր Սերո Խանզադյանի, Նախկին գիեվուհական, հանգուցյալ Մուշեղ Գևորգյանի գրառումները Գորիսի շրջանից, Զորեն Տեր-Մինասյանի գրառումները Մեղրու շրջանից, Ինչպես նաև Հեագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության բաժնի 1967 թ. Զանգեզուրի խմբառւմի նյութերից:

Պատմական Արցախն ու Սյունիքը տարբեր ժամանակաշրջաններում ընդլայնել են իրենց սահմանները, հաճախ ներառելով նույն բնակավայրերը՝ անվանափոխված ու վերակազմված: Բայց դարերի ընթացքում լինելով հարևան ու սահմանակից՝ հրաճ պահպանել են լեզվա-բարբառային ու ազգագրական ընդհանուր շատ գծեր, որոնք դրսևորում են սառցել հոգևոր մշակույթի, այդ թվում և հեփաքների մեջ:

Արցախը տարբեր ժամանակներում հայկական աղբյուրներում կոչվել է՝ Արցախ, Փոփո-Սյունիք, Խաչեն, Սև ալգի, իսկ պարսիկների ու բարսիների կողմից՝ Ղարաբաղ: XI—XIII դարերում Արցախի տարածքում (որն այդ շրջանում ավելի

հայտնի էր հաշին անուամբ) . կային հայկական մի բանի իշխանություններ: Դրանց իշխանական տերիտորիայի մի զգալի մասը Գաղիկ Ա-ն (989—1020) գրավեց և միացրեց Անի-Եփրատի քաղաքներին: XIV դարում Արցախում հիմնվում են մեկնություններ, որոնք անտեսական և բազմական խոշոր դեր են կատարում ժողովրդի ինքնուրույնության պահպանման գործում: XVI դարում, Շահ Աբրահիմ տիրապետության ժամանակ, Ղարաբաղը կազմում էր Գյանեյայի խանության մի մասը, իսկ XVIII դարում այնտեղ հիմնվեց առանձին խանություն, որը կոչվում էր Ղարաբաղի կամ Շուշու խանություն: XIX դարի սկզբներին Ղարաբաղի խանությունը վերջնականապես միացվեց Ռուսաստանին և ընդունեց ռուսական տիրապետությունը: Սյունիքն ու Արցախը եղել են պարսկական և թուրքական տիրապետության դեմ XVIII դարի հայ ազգային-ազատագրական պայքարի օրրանը:

Արցախն ու Սյունիքը իրենց բնությամբ ու աշխարհագրական դիրքով բնաշխարհի գեղատեսիլ շրջաններից են: Կաներից էջանավոր են՝ Մասլը, Քիրսը, Փեթը, Կապուտալուր, գետերից՝ Կուրը, Գաղգարը, Խաչնեղածոր, Փարբառը, Որոտանը, Ուլլին, Արաքսը, լեռներից՝ Ալեարակը, Գյուկ-Գյուրը, Տգրկածավը և այլն: Արցախն ու Սյունիքն ունեն անասնապատ գեղեցիկ հովիտներ ու բազմատեսակ բուսականությամբ առատ դաշտեր, առանձուկ աղբյուրներ ու հաճախյին շրջեր: Արցախի և Սյունիքի դաշտերում հնուց ի վեր մշակվել են ցորեն, գարի, բամբակ, զբաղվել են այգեգործությամբ ու ընրամապանությամբ: Առանձնապես լայն տարածում էր գտել ձիաբուծությունը: Ղարաբաղյան եմուղները ոչնչով ետ չէին մնում փառաբանված տարրական ձիերից: Արցախն ու Սյունիքը էջանավոր են պատմական հուշարժաններով (Ամարաս, Գանձասար, Հերհեր, Տաթև, Վահանավանք և այլն):

Արցախն ու Սյունիքը իրենց բնությամբ ու աշխարհագրական դիրքով, բնանկան սովորություններով, կենցաղով ու ապրելակերպով յուրահատուկ շատ գծեր ունեն, որոնք անդրադարձում են գտել նաև հեփիարներում: Հայ ժողովրդական հեփիարների համընդհանուր նախալում գառն օյուծեներին զուգահեռ Արցախի և Սյունիքի հեփիարները ինքնատիպ երանգավորմամբ ցուցադրում են տեղի ազգայնականության նախնական պատկերացումներն ու ըմբռնումները՝ բնության երևույթների ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Չնայած օտարերկրյա տիրապետության երկարամյա լծին, Արցախ-Սյունիքի հեփիարներում հարազատորեն ու անաղարտ ձևով պահպանվել են ազգային հին սովորություններն ու ծեսերը, դարերից փոխանցված բարոյական բարձր ու վսեմ ավանդները: Այնտեղ զգացվում է լուսնային շուշուր և հերոսական այն տրամադրությունը, որը դարերի ընթացքում ուղեկից է եղել հայ ժողովրդի պատմական նակատագրին: Գեղարվեստական տեսակետից Արցախ-Սյունիքի հեփիարները ընդունալով ու անկեղծ հույզով, կծու երգիծանքով ու նուրբ հումորով են առգրաված:

Երկու հատորի հեփիարների լեզուն՝ լեզվաբանության մեջ ընդհանուր նախալում գառն Ղարաբաղի բարբառն է՝ իր տարբեր ենթաբարբառներով ու խոսվածքներով: Որոշակի տարբերություններ կան օրինակ՝ Գուրխի, Միսիանի, Ղափանի ենթաբարբառների ու Ղարաբաղի բարբառի միջև, բացի դրանից զգացվում են յուրահատկություններ բուն Ղարաբաղի և Սյունիքի առանձին խոսվածքների միջև: Այս բարբառներից զգալապես տարբերվում է Մեղրու բարբառը:

Երկու հատորի էջայտերի տեղաբաշխման ժամանակ առանձնացված են եր-

կու հիմնական բաժիններ՝ Արցախ (Ղարաբաղ) և Սյունիք (Զանգեզուր)՝ նկատի առնելով և՛ լեզվա-բարբառային, և՛ պատմական-ազգագրական յարանառկությունները: Յուրաքանչյուր բաժնի հեփաթները խմբավորված են ըստ տեսակների՝ կախարդական-հրաշագրական, արկածային-ավանդական, կենցաղային-խրաղական, կենդանական, անկեղծառային-երգիծական և այլն:

Ինչպես նախագ հատորներում, այս հատորում ևս պահպանված են «Հայ ժողովրդական հեփաթներ» գիտական հրատարակության համար ընդունված բնագրաբանական (տեխնաբանական) ընդհանուր սկզբունքները:

1. Պահպանված է հեփաթների պատմաների ամբողջականությունը: Բնագրերի նկատմամբ խմբագրական որևէ փոփոխություն (հասցավում, հավելում և այլն) չի կատարված: Ասացողների «վերնագրերը»՝ դեմքերի, բվերի շփոթում ու անհամաձայնությունն և այլն, չեն ուղղված բնագրում, քայքայ զրանց մասին նշված է ծանոթագրության կարգով: Հեփաթների վերնագրերը թողնված են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում են, իսկ երբ չկան, նշանակված են՝ ծանոթագրության մեջ հիշելով այն:

2. Հեփաթների լեզուն չի փոփոխված, այսինքն՝ թարգմանված է այնպես, ինչպես գրի է առել բանաստեղծը ասացողներից: Նյութերը գրված են հար ուղագրությամբ: Յուրաքանչյուր ասացողի հաղորդած նյութի բնագրում բառերի գրության խախտարկություն չառնդծելու նպատակով միօրինակ են դարձված նույն բառերի գրության տարբեր ձևերը:

3. չնայած և ուղղված են բնագրերի տրոհության և առգծանության նշանները, բնագրերի պարբերությունների ու երկխոսությունների բաժանումը: Բացի հատուկ անուններից, բնագրերում մեծատառով են գրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչների անունները և հեփաթներում գործող հերոսներին արված մականանունները:

4. Սկզբնաղբյուրներում հանդիպող՝ բանաստեղծների ընդմիջակայությունները (բառերի և արտահայտությունների բացատրություններ, առանձին դեպքերի ու զգվածների մեկնաբանություններ և այլն) առանձնացված են բուն բնագրից և գրված են կլասակին՝ համապատասխան ծանոթագրությամբ: Բայր տեսակի նշանակների, բացատրությունների դեպքում օգտագործված սղումները նշանակում են՝ Մ. Բ. — ծանոթություն բանաստեղծի, Մ. Կ. — ծանոթություն կազմողի, Մ. Ա. — ծանոթություն ասացողի:

Այս ընդհանուր սկզբունքների ու կանոնների կիրառմանը զուգընթաց հաշվի են առնված նաև սույն հատորի նյութերի առանձնահատկությունները:

«Հայ ժողովրդական հեփաթների» VII հատորը ըստ կառուցվածքի, ներկայացնում է հետևյալ պատկերը.

Հիմնական բնագրի բաժնում ներկայացված են ըստ բնույթի խմբավորված՝ Առնային Ղարաբաղի և Զանգեզուրի բնակավայրերի հեփաթները:

Հավելվածի բաժնում գեանելված են Մեղրու և Միսիանի չրաններից գրի առնված հեփաթները, որոնք իրենց լեզվով ու բարբառային առանձնահատկություններով զանազանվում են Առնային Ղարաբաղի և Գարեխի չրանների հեփաթներից:

Մանրագրությունների մեջ ներառնությամբ լուսարանվում են հատորում առկա գտած բայր հեփաթների գրառման պատմությունը:

Բառարանն ընդգրկում է բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերի բացատրությունը:

Ժանկերը ներկայացնում են հեփթաբները ըստ տեղի և առաջագոհների ու այբբենական կարգով: Փանի որ ներկա հատարը ազգագրական մի շրջանը ամփոփող հատար է, արված են նաև հատուկ տեղումների և առարկայական ցանկեր՝ V, VI և VII հատարների համար համատեղ: